# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն նոր բնակելի շենքի կառուցման տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/6 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 15.06.2020թ կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/6 պայմանագրում 2020 թվականի դեկտեմբերիի 28-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 25.12.2020թ. N 2190-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/6 ծածկագրով պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների նվազեցում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 և 7.8 կետերը: |

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

**15.06.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/6 պետական գնման պայմանագրի**

ք. Երևան «28» դեկտեմբերի 2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԷԱԳ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս ընկերության տնօրեն Ս. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.12.2020թ N 2190-Ն որոշումը և Կողմերի միջև ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն նոր բնակելի շենքի կառուցման տեխնիկական հսկողության ծառայության մատուցման համար 15.06.2020թ կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/6 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 4.1 կետում նշված «4 001 609 (չորս միլիոն մեկ հազար վեց հարյուր ինը)» թիվը և բառերը փոխարինել «3 044 609 (երեք միլիոն քառասունչորս հազար վեց հարյուր ինը)» թվով և բառերով:

1.2 Պայմանագրի հավելված N2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համաձայնագրի հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջերից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| **Պատվիրատու՝** | **Կատարող՝** |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>ՀՀ 900011011773<br>ՀՎՀՀ 02565827 | «ԷԱԳ» ՍՊԸ<br>ՀՀ ք. Երևան, Ուլնեցու 31/2<br>«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 11500658117300<br>ՀՎՀՀ 00123265 |
| Գլխավոր քարտուղար | Տնօրեն՝ |
| ______________ Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ______________ Ս. Վարդանյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված
15.06.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/6 պայմանագրի
28.12.2020թ. կնքված N 2 համաձայնագրի

«Հավելված N 2
15.06.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/6 պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| 1 | 71351540/1 | ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն նոր բնակելի շենքի կառուցման տեխնիկական հսկողության ծառայություն | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | | | - | - | - | - | - | 1 222 000 | 2 541 609 | 2 541 609 | 2 541 609 | 3 044 609 | 3 044 609 | 3 044 609 | 3 044 609 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:»

**Պատվիրատու՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011011773
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար

---------------------------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կատարող՝**

«ԷԱԳ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Ոլնեցու 31/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500658117300
ՀՎՀՀ 00123265

Տնօրեն՝

---------------------------- Ս. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.